ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1283-Ա

ՀԵՐԻՔՆԱԶ ԳՐԻԳՈՐԻ ԹԱՄՈՅԱՆԻՆ ԻՐ ՈՐԴՈՒ՝ ԱՇՈՏ ՍԱՄՎԵԼԻ ՔԱՐԱՄՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության» պահանջներով, հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 23.10.2026 թվականի թիվ 16 արձանագրությունը և ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի սեպտեմբերի 11-ի N ԳԴ/0224/02/26 քաղաքացիական գործով կայացրած վճիռը Աշոտ Սամվելի Քարամյանին անգործունակ ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ Աշոտ Սամվելի Քարամյանը բնակվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 50 հասցեում և հիմք ընդունելով Հերիքնազ Գրիգորի Թամոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Բավարարել Հերիքնազ Գրիգորի Թամոյանի խնդրանքը և նրան ճանաչել իր որդու՝ Աշոտ Սամվելի Քարամյանի (ծնված՝ 09.01.1988 թվականին) խնամակալ, նրան իրավունք վերապահելով Աշոտ Սամվելի Քարամյանի անունից և նրա շահերից ելնելով կնքելու բոլոր անհրաժեշտ գործարքները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 02
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1284-Ա

«ՄԵԾ ՀԱՅՔ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Մեծ Հայք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի հոկտեմբերի 30-ի N-8737-S)՝ ***որոշում եմ.***

1. «Մեծ Հայք» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի Երևանյան խճուղի թիվ 10 հասցեում գտնվող 25 քմ մակերեսով բարում ոգելից խմիչքների իրացման թույլտվություն 2026 թվականի 4-րդ եռամսյակի համար (թույլտվությունը կցվում է):
2. «Մեծ Հայք» ՍՊԸ տնօրենին՝ Մարտունու համայնքապետարանի 900145102068 հաշվի համարին վճարել 3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 02
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի №1285-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՐՑԱԽԻ ՓՈՂՈՑ, 11-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0015-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 16-ի №182-Ա որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Մերի Ներսեսի Գեղամյանի 14.09.2026 թվականի №7454-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Արցախի փողոց, 11-րդ նրբանցք, թիվ 2 հասցեում գտնվող, Մերի Ներսեսի Գեղամյանին (ծնված՝ 17.08.1986 թվականին), Կարեն Կարոյի Ղազարյանին (ծնված՝ 08.04.2010 թվականին) և Գևորգ Կարոյի Ղազարյանին

(ծնված՝ 06.07.2014 թվականին) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 05-003-0015-0003 կադաստրային ծածկագրով 0.0893 հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 69.91 քմ արտաքին մակերեսով նկուղը (ներքին մակերեսը՝ 47.2 քմ, կառուցված՝ 2010 թվականին) և 162.74 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 121.6 քմ, կառուցված՝ 2010 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   նկուղի համար՝ 69.91x10000x0.1422=99412 (իննսունինը հազար չորս հարյուր տասներկու) ՀՀ դրամ.

   բնակելի տան համար՝ 162.74x10000x0.1422=231416 (երկու հարյուր երեսունմեկ հազար չորս հարյուր տասնվեց) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 330828 (երեք հարյուր երեսուն հազար ութ հարյուր քսանութ) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026NPWKH9):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Արցախի փողոց, 11-րդ նրբանցք, թիվ 2 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 2
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի №1286-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԵՐԻՆ ԴԵՄԵՐ ԹԱՂԱՄԱՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 51 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-0057-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Ռազմիկ Վաչագանի Թաթոյանի 14.09.2026 թվականի №7468-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դեմեր թաղամասի 4-րդ փողոց, թիվ 51 հասցեում գտնվող, Ռազմիկ Վաչագանի Թաթոյանին (ծնված՝ 03.02.1966

թվականին), Ալվարդ Խաչիկի Թաթոյանին (ծնված՝ 15.01.1966 թվականին), Հակոբ Ռազմիկի Թաթոյանին (ծնված՝ 11.11.1989 թվականին) և Անի Ռազմիկի Անտոնյանին (ծնված՝ 20.10.1990 թվականին) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 05-066-0057-0013 կադաստրային ծածկագրով 0.23191 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 16.38 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 11.21 քմ, կառուցված՝ 2012 թվականին), 4.98 քմ մակերեսով աստիճանները (կառուցված՝ 2012 թվականին), 37.62 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը (ներքին մակերեսը՝ 31.95 քմ, կառուցված՝ 2012 թվականին), 68.24 քմ արտաքին մակերեսով անասնաշենք-հացատունը (ներքին մակերեսը՝ 51.7 քմ, կառուցված՝ 2018 թվականին) և 12.5 քմ մակերեսով պարիսպը (կառուցված՝ 2010 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   բնակելի տան համար՝ 16.38x10000x0.1028=16839 (տասնվեց հազար ութ հարյուր երեսունինը) ՀՀ դրամ.

   աստիճանների համար՝ 4.98x10000x0.1028=5119 (հինգ հազար հարյուր տասնինը) ՀՀ դրամ.

   ավտոտնակի համար՝ 37.62x6000x0.1028=23204 (քսաներեք հազար երկու հարյուր չորս) ՀՀ դրամ.

   անասնաշենք-հացատան համար՝ 68.24x6000x0.1028=42090 (քառասուներկու հազար իննսուն) ՀՀ դրամ.

   պարիսպի համար՝ 12.5x6000x0.1028=7710 (յոթ հազար յոթ հարյուր տասը) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 94962 (իննսունչորս հազար ինը հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026M3YTJ2):
5. Հատկացման չափից մինչև քսան տոկոս ավել օգտագործվող 0.00191 հա հողամասի նկատմամբ (փաստացի օգտագործվող մակերեսը՝ 0.23191 հա, գրանցված մակերեսը՝ 0.23 հա), որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականությունը:
6. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
7. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վերին Դեմեր թաղամաս, 4-րդ փողոց, թիվ 51 հասցեն:
8. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 2
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1287-Ա

«ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 42 ՀԱՍՑԵԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿԻ Ա ԵՎ Բ ԿՈՂՄԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Բիթիէլ Սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի նոյեբերի 2-ի N 8787-Տ)՝ ***որոշում եմ.***

1. «Բիթիէլ Սերվիսիս» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոց, թիվ 42 հասցեին հարակից տարածքում գտնվող գովազդային վահանակի Ա և Բ կողմերում 36 քմ մակերեսով սոցիալական արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2026 թվականի նոյեմբեր ամսվա համար:
2. Սոցիալական գովազդի համար տեղական տուրք սահմանել 0 դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 2
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1288-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱԻԴԱ ԳԵՆԱԴԻԿԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ՝ ԱԼԲԵՐՏ, ՍԵՐԺԻԿ ԵՎ ԱՎԵՏ ԱՐՄԵՆԻ ԱՆՏՈՆՅԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐ ԵՎ ԺԱՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 42-րդ, 54-րդ և 56-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը», Մարտունու համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 02.11.2026 թվականին թիվ 18 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Աիդա Գենադիկի Անտոնյանին՝ իր անչափահաս երեխաների՝ Ալբերտ Արմենի Անտոնյանի (ծնված՝ 05.06.2018 թվականին), Սերժիկ Արմենի Անտոնյանի (ծնված՝ 27.05.2021 թվականին) և Ավետ Արմենի Անտոնյանի (ծնված՝ 08.12.2023 թվականին) հետ տեսակցության համար սահմանել հետևյալ կարգը՝ մայրը իրավունք ունի յուրաքանչյուր շաբաթվա երեքշաբթի և հինգշաբթի օրերին ժամը 17^{00}-ից 20^{00}-ն և ուրբաթ օրը գիշերակացով՝ ժամը 16^{00}-ից մինչև շաբաթ օրը ժամը 18^{00}-ն տեսակցել իր երեխաներին:
2. Պարտավորեցնել Աիդա Գենադիկի Անտոնյանին տեսակցության ավարտից հետո երեխաներին վերադարձնել հոր բնակության վայր:
3. Պարտավորեցնել երեխաների հորը՝ Արմեն Անտոնյանին, խոչընդոտ չհանդիսանալ մոր հետ երեխաների տեսակցությանը:
4. Պարտավորեցնել Աիդա Գենադիկի Անտոնյանին երեխաների հետ տեսակցությունը կազմակերպել սույն որոշման 1-ին կետով սահմանված ժամանակացույցին համապատասխան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 2

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի №1289-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՆՔԻ ԹԱՂԱՄԱՍԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-0134-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Վաչագան Վանուշի Բաղդասարյանի 05.10.2026 թվականի №7994-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Վանքի թաղամասի 5-րդ փողոց, թիվ 4/1 հասցեում գտնվող, Վաչագան Վանուշի Բաղդասարյանին (ծնված՝ 21.09.1956 թվականին), Ադրիկ Վաչագանի Բաղդասարյանին (ծնված՝ 07.08.1981 թվականին), Արկադի Վաչագանի Բաղդասարյանին (ծնված՝ 23.09.1982 թվականին) և Ալվարդ Անուշավանի Բաղդասարյանին (ծնված՝ 10.01.1960 թվականին) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 05-066-0134-0006

կադաստրային ծածկագրով 0.13447 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 11.98 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը (ներքին մակերեսը՝ 7.71 քմ, կառուցված՝ 2006 թվականին), 4.39 քմ մակերեսով աստիճանները (կառուցված՝ 2006 թվականին), 11.98 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 2-րդ հարկը (ներքին մակերեսը՝ 7.71 քմ, կառուցված՝ 2006 թվականին), 13.72 քմ մակերեսով բաց պատշգամբը (կառուցված՝ 2006 թվականին), 29.1 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը (ներքին մակերեսը՝ 27.35 քմ, կառուցված՝ 2006 թվականին) և 6.92 քմ մակերեսով պարիսպը (կառուցված՝ 2012 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   բնակելի տան 1-ին հարկի համար՝ 11.98x10000x0.1028=12315 (տասներկու հազար երեք հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ.

   աստիճանների համար՝ 4.39x10000x0.1028=4513 (չորս հազար հինգ հարյուր տասներեք) ՀՀ դրամ.

   բնակելի տան 2-րդ հարկի համար՝ 11.98x10000x0.1028=12315 (տասներկու հազար երեք հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ.

   բաց պատշգամբի համար՝ 13.72x10000x0.1028=14104 (տասնչորս հազար հարյուր չորս) ՀՀ դրամ.

   օժանդակ շինության համար՝ 29.1x6000x0.1028=17950 (տասնյոթ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ.

   պարիսպի համար՝ 6.92x6000x0.1028=4268 (չորս հազար երկու հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 65465 (վաթսունհինգ հազար չորս հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026WTQYD8):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վանքի թաղամաս, 5-րդ փողոց, թիվ 4/1 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 2
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի №1290-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 52/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-085-0119-0053 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 16-ի №182-Ա որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Ձայնիկ Խորենի Ավետիսյանի 25.09.2026 թվականի №7763-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի 2-րդ փողոց, թիվ 52/1 հասցեում գտնվող, Ձայնիկ Խորենի Ավետիսյանին (ծնված՝ 07.06.1968 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-085-0119-0053 կադաստրային ծածկագրով 0.0753

հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 57.55 քմ արտաքին մակերեսով նկուղը (ներքին մակերեսը՝ 37.62 քմ, կառուցված՝ 2013 թվականին), 125.63 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 93.95 քմ, կառուցված՝ 2013 թվականին), 43.66 քմ արտաքին մակերեսով ձեղնահարկը (ներքին մակերեսը՝ 36.6 քմ, կառուցված՝ 2013 թվականին) և 50.97 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը (ներքին մակերեսը՝ 43.36 քմ, կառուցված՝ 2013 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

նկուղի համար՝ 57.55x10000x0.0874=50299 (հիսուն հազար երկու հարյուր իննսունինը) ՀՀ դրամ.

բնակելի տան համար՝ 125.63x10000x0.0874=109801 (հարյուր ինը հազար ութ հարյուր մեկ) ՀՀ դրամ.

ձեղնահարկի համար՝ 43.66x10000x0.0874=38159 (երեսունութ հազար հարյուր հիսունինը) ՀՀ դրամ.

ավտոտնակի համար՝ 50.97x6000x0.0874=26729 (քսանվեց հազար յոթ հարյուր քսանինը) ՀՀ դրամ.

ընդամենը՝ 224988 (երկու հարյուր քսանչորս հազար ինը հարյուր ութսունութ) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026UEY6UR):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդենիկ բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 52/1 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 2
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2026 թվականի №1291-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Ա-8 ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-0162-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Արմեն Գագիկի Սիմոնյանի 27.10.2026 թվականի №8619-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի Ա-8 թաղամասի 6-րդ փողոց, թիվ 3/1 հասցեում գտնվող, Արմեն

Գագիկի Սիմոնյանին (ծնված՝ 29.07.1983 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-066-0162-0031 կադաստրային ծածկագրով 0.2498 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 48.0 քմ արտաքին մակերեսով նկուղը (ներքին մակերեսը՝ 35.0 քմ, կառուցված՝ 2018 թվականին), 103.7 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը (ներքին մակերեսը՝ 78.19 քմ, կառուցված՝ 2018 թվականին), 8.88 քմ մակերեսով բնակելի տան 1-ին հարկի բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2018 թվականին), 62.93 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը (ներքին մակերեսը՝ 52.29 քմ, կառուցված՝ 2018 թվականին), 69.33 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 2-րդ հարկը (ներքին մակերեսը՝ 51.79 քմ, կառուցված՝ 2018 թվականին), 88.54 քմ արտաքին մակերեսով մանսարդը (ներքին մակերեսը՝ 74.57 քմ, կառուցված՝ 2018 թվականին) և 8.76 քմ մակերեսով մանսարդի բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2018 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   նկուղի համար՝ 48.0x10000x0.1028=49344 (քառասունինը հազար երեք հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ.

   բնակելի տան 1-ին հարկի համար՝ 103.7x10000x0.1028=106604 (հարյուր վեց հազար վեց հարյուր չորս) ՀՀ դրամ.

   բնակելի տան 1-ին հարկի բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 8.88x10000x0.1028=9129 (ինը հազար հարյուր քսանինը) ՀՀ դրամ.

   ավտոտնակի համար՝ 62.93x6000x0.1028=38815 (երեսունութ հազար ութ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ.

   բնակելի տան 2-րդ հարկի համար՝ 69.33x10000x0.1028=71271 (յոթանասունմեկ հազար երկու հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ.

   մանսարդի համար՝ 88.54x10000x0.1028=91019 (իննսունմեկ հազար տասնինը) ՀՀ դրամ.

   մանսարդի բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 8.76x10000x0.1028=9005 (ինը հազար հինգ) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 375187 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026S8VK26):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Լիճք բնակավայր, Ա-8 թաղամաս, 6-րդ փողոց, թիվ 3/1 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 3
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2026 թվականի N 1292-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-036-0016-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի 05-036-0016-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովասար բնակավայր, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 3 բնակելի տուն հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 03
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2026 թվականի N 1293-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՆԵՐՔԻՆ ԴՈՒՐԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 69 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-0109-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,136 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ, 10-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.04.2015 թվականի թիվ 412-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2026 թվականի նոյեմբերի 3-ի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք,Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դուրան թաղամասի 3-րդ փողոց, թիվ 69 հասցեում գտնվող 05-066-0109-0003 կադաստրային ծածկագրով 0,136 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. նոյեմբերի 3
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2026 թվականի N 1294-Ա

ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՂԱՎԱՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՓԱՍՏՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 26-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի և 219.1 հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի 2026 թվականի նոյեմբերի 3-ի զեկուցագիրը վարչական իրավախախտման մասին՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրում գտնվող «Օձավանք» եկեղեցու պահպանական գոտու տարածքում առանց համապատասխան թույլտվության տաղավար տեղադրելու փաստը պարզելու նպատակով հարուցել վարչական վարույթ և լսումների օր նշանակել 2026 թվականի նոյեմբերի 27-ին, ժամը 11:00-ին Մարտունու համայնքապետարանում (հասցեն՝ ք. Մարտունի, Շահումյան փողոց, թիվ 2):
2. Վարույթի իրականացումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի վարչական վարույթի իրականացման հարցերով հանձնաժողովին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 3

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2026 թվականի №1295-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Կ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-085-0054-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Հայկ Նորահայկի Աբրոյանի 23.09.2026 թվականի №7671-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի Կ. Շահինյան փողոց, թիվ 11 հասցեում գտնվող, Հայկ Նորահայկի Աբրոյանին (ծնված՝ 14.01.1957 թվականին), Գոհար Պարույրի Աբրոյանին (ծնված՝ 08.04.1958 թվականին), Արմինե Հայկի Աբրոյանին (ծնված՝ 05.11.1978 թվականին), Սահակ Հայկի Աբրոյանին (ծնված՝ 23.12.1979 թվականին)

և Աղունիկ Հայկի Աբրոյանին (ծնված՝ 01.08.1981 թվականին) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 05-085-0054-0002 կադաստրային ծածկագրով 0.1447 հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 47.93 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 35.65 քմ, կառուցված՝ 2007 թվականին) և 0.65 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2007 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   բնակելի տան համար՝ 47.93x10000x0.0874=41891 (քառասունմեկ հազար ութ հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ.

   բնակելի տան բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 0.65x10000x0.0874=568 (հինգ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 42459 (քառասուներկու հազար չորս հարյուր հիսունինը) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026FWFY59):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդենիկ բնակավայր, Կ. Շահինյան փողոց, թիվ 11 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 03
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2026 թվականի №1296-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 31 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-085-0063-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Լևոն Ավետիքի Քոչարյանի 24.09.2026 թվականի №7700-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի 3-րդ փողոց, թիվ 31 հասցեում գտնվող, Լևոն Ավետիքի Քոչարյանին (ծնված՝ 29.10.1960 թվականին) և Լուսինե Հայրիկի Քոչարյանին (ծնված՝ 14.08.1974 թվականին) ընդհանուր համատեղ սեփականության

իրավունքով պատկանող 05-085-0063-0005 կադաստրային ծածկագրով 0.143 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 125.62 քմ արտաքին մակերեսով նկուղը (ներքին մակերեսը՝ 87.92 քմ, կառուցված՝ 2006 թվականին), 112.88 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 89.64 քմ, կառուցված՝ 2006 թվականին) և 15.96 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2006 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   նկուղի համար՝ 125.62x10000x0.0874=109792 (հարյուր ինը հազար յոթ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ.

   բնակելի տան համար՝ 112.88x10000x0.0874=98657 (իննսունութ հազար վեց հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ.

   բնակելի տան բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 15.96x10000x0.0874=13949 (տասներեք հազար ինը հարյուր քառասունինը) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 222398 (երկու հարյուր քսաներկու հազար երեք հարյուր իննսունութ) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026Q4ALPX):
5. Հատկացման չափից մինչև քսան տոկոս ավել օգտագործվող 0.001 հա հողամասի նկատմամբ (փաստացի օգտագործվող մակերեսը՝ 0.143 հա, գրանցված մակերեսը՝ 0.142 հա), որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականությունը:
6. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
7. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդենիկ բնակավայր, 3-րդ փողոց, թիվ 31 հասցեն:
8. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 3
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2026 թվականի N 1297-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԱՆ ԱՐԵԳ ՕՆԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՁԵՂՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 171-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Մարտունու երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ներկայացրած փաստաթղթերը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Մարտունու երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սան Արեգ Օնիկի Հովսեփյանին տրամադրել ծնողական վարձավճարի 50% զեղչ՝ հաշվի առնելով, որ նա ունի հաշմանդամություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 4
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2026 թվականի N 1298-Ա

«ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԵՎ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿ ՀԱՍՑԵԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿԻ Ա ԵՎ Բ ԿՈՂՄԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Բիթիէլ Սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի նոյեմբերի 4-ի N 8912-Տ)՝ ***որոշում եմ.***

1. «Բիթիէլ Սերվիսիս» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան և Գ. Նժդեհի փողոցների խաչմերուկ հասցեին հարակից տարածքում գտնվող գովազդային վահանակի Ա և Բ կողմերում 36 քմ մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2026 թվականի նոյեմբեր ամսվա համար:
2. «Բիթիէլ Սերվիսիս» ՍՊԸ-ի տնօրինությանը՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 27000 (քսանյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 4
ք. Մարտունի

